ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի ապրիլի 25-26-ը Լիտվայի Հանրապետություն (Վիլնյուս) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը**.
   Արման Ուդումյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**.
   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**.
   Լիտվայի Հանրապետություն (Վիլնյուս), 2019 թվականի ապրիլի 25-26-ը

4. **Հրավիրող կողմը**.
   Լիտվայի Հանրապետության սոցիալական ապահովության և աշխատանքի նախարարություն

5. **Գործուղման նպատակը** */աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/*.

   Երկկողմ հանդիպում Լիտվայի Հանրապետության սոցիալական ապահովության և աշխատանքի նախարարի տեղակալ Էյտվիդաս Բինգելիսի հետ:

   Մասնակցություն «Աշխատանքի թվայնացված աշխարհին ընդառաջ. Աշխատանքի ոլորտի ապագան բոլորիս համար» խորագրով բարձր մակարդակի միջազգային համաժողովին:

6. **Քննարկված թեմաները**.
   Համաժողովի մասնակից երկրների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, համաժողովի շրջանակներում, ինչպես նաև զուգահեռ նիստերի ընթացքում քննարկվեցին հետևյալ հարցերը.

   - ինչպե՞ս են տեխնոլոգիական փոփոխությունները ազդելու աշխատանքի և աշխատողների արդյունավետության վրա,
   - արդյո՞ք նոր տեխնոլոգիաները կվերացնեն ցածր որակավորում պահանջող աշխատանքները,
   - որքանո՞վ նոր տեխնոլոգիաները կնպաստեն մարդկային կապիտալի զարգացմանը,
   - ինչպե՞ս նոր տեխնոլոգիաները կազդեն աշխատանքի որակի և աշխատաժամանակի փոփոխության վրա,

- ի՞նչ հնարավորություններ և մարտահրավերներ կլինեն սոցիալական պաշտպանության համակարգերում՝ ապահովելու ոչ ստանդարտ ձևերով աշխատող մարդկանց (տնից աշխատողներ, ինքնազբաղվածներ և այլն):

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Երկկողմ հանդիպում Լիտվայի Հանրապետության սոցիալական ապահովության և աշխատանքի նախարարի տեղակալ Էյտվիդաս Բինգելիսի հետ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը և Լիտվայի Հանրապետության սոցիալական ապահովության և աշխատանքի նախարարությունը սոցիալական պաշտպանության և աշխատանքի ոլորտում ունեն համագործակցության համաձայնագիր: Այս շրջանակներում, երկկողմ հանդիպման ընթացքում քննարկվեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պատվիրակության՝ ուսումնական այցով Լիտվա մեկնելու հետ կապված հարցերը, ներառյալ այցի թեմաները և ժամանակացույցը:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Պայմանավորվածություն ձեռք բերվեց ուսումնական այցը կազմակերպել ս/թ հունիսին կամ սեպտեմբերին: Համաձայն գործող համաձայնագրի՝ ուսումնական այցերը կֆինանսավորի լիտվական կողմը:

Նախնական պայմանավորվածություն ձեռք բերվեց ուսումնական այցի շրջանակներում Լիտվայի փորձը ուսումնասիրել հետևյալ հարցերի շուրջ.

- ուսումնասիրել աշխատանքային վեճերի կարգավորման հանձնաժողովի գործունեության ձևաչափը և մանդատը,
- ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի շրջանակներում «Աշխատանքային իրավունք» ոլորտի, ինչպես նաև «Աշխատավայրում առողջություն և անվտանգություն պահպանման» հետ կապված ՀՀ-ի կողմից ստանձնած դիրեկտիվների մոտարկման լիտվական փորձի ուսումնասիրություն,
- աշխատաշուկայի ակտիվ ծրագրերի լիտվական փորձի ուսումնասիրություն:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Առաջարկվեց ուսումնական այցի պատվիրակության կազմում ներառել նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության մասնագետի, որը կներկայացնի փոխադարձ հետաքրքություն ներկայացնող ոլորտներում նախարարության կողմից իրականացվող բարեփոխումները:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

30 ապրիլ, 2019թ.